

## **Համաձայնագիր**

**Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Շվեյցարիայի Համադաշնության զարգացման և համագործակցության գործակալության միջև  
ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի համադաշնության միջև հաստատված բարեկամական համագործակցային կապերից, ղեկավարվելով աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ՄԱԿ-ի և այլ միջազգային կառույցների ծավալած գործունեության սկզբունքներից,

նպատակ ունենալով ամրապնդել երկու երկրների համապատասխան կառույցների միջև գոյություն ունեցող բարեկամական փոխհարաբերությունները,

հիմք ընդունելով 2004 թ. ապրիլի 3-ին՝ Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված «Տեխնիկական ու ֆինանսական համագործակցության ու մարդասիրական օգնության վերաբերյալ համակարգային համաձայնագրի» դրույթները՝

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ «Նախարարություն») և Շվեյցարիայի Համադաշնության զարգացման և համագործակցության գործակալությունը (այսուհետ՝ ՇԶՀԳ) համաձայնում են հետևյալի մասին.

### **Հոդված 1. Ընդհանուր դրույթներ և սահմանումներ**

1. Սույն համաձայնագրի շրջանակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ ենթատեքստով այլ բան չի ենթադրվում, ստորև ներկայացված տերմինները օգտագործվում են հետևյալ իմաստներով՝

ա/ «Համաձայնագրի կողմեր» նշանակում է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն» և «Շվեյցարիայի Համադաշնության զարգացման և համագործակցության գործակալություն»,

բ/ «ՃԿԿ» նշանակում է «Ճգնաժամային կառավարման կենտրոն»,

գ/ «Աշխատանքային խումբ» նշանակում է նախարարության կողմից նշանակված 4-5 աշխատակիցներից բաղկացած խումբ, որն ապահովում է համապատասխան աշխատանքային գործընթացները,

դ/ «ԱՌՆ» նշանակում է «Աղետների ռիսկերի նվազեցում»,

ե/ «Ծրագիր» նշանակում է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնին փորձագիտություն տրամադրելու միջոցով՝ արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգը բարելավելուն ուղղված խորհրդատվական

աջակցություն>>: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Համաձայնագրի կողմերի սույն Համաձայնագրով ներկայացված գործողությունները:

## **Հոդված 2. Իրականացման համար պատասխանատվությունը**

1. Նախարարությունը գործում է որպես Ծրագրի իրականացման գործընկեր: Նախարարությունը պատվիրակում է Ծրագրի իրականացումը Աշխատանքային խմբին, որը նշանակվում է արտակարգ իրավիճակների նախարարի կողմից:

2. ՇՂՀ-ն հանդես է գալիս որպես սույն Համաձայնագրի կիրարկման ու Ծրագրի իրականացման գործընկեր: ՇՂՀ-ն Ծրագրի իրականացման համար պատասխանատվությունն ու իրավազորությունը պատվիրակում է Հարավային Կովկասում Շվեյցարիայի Համադաշնության համագործակցության գրասենյակին:

3. Տեխնիկական առաջադրանքով սահմանված պարտականությունների ու գործողությունների իրականացումը ՇՂՀ-ն հանձնարարում է նշանակվող խորհրդատուին:

4. Գործողությունների տեխնիկական գործառույթների սխեման կցվում է:

## **Հոդված 3. Խնդիրները և նպատակները**

1. Սույն Ծրագրի ընդհանուր խնդիրն է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախարարությանը վերապահված կարողությունների ամրապնդումը աղետների ռիսկերի կրճատման բնագավառում:

2. Ծրագրի հիմնական նպատակներն են.

ա/ կատարելագործել ՃԿԿ-ի գործունեության արդյունավետությունը՝ քննարկելով վերջինիս գործառույթները, պարտականությունները և կառուցվածքը՝ ելնելով առկա կարիքներից, համաձայնեցված նպատակներից ու այլ երկրների ու համապատասխան կառույցների լավագույն փորձից,

բ/ կատարելագործել ՃԿԿ-ի գործառնական կառուցվածքը,

գ/ ամրապնդել ՃԿԿ-ի, այլ նախարարությունների ու շահագրգիռ կողմերի համագործակցության մեխանիզմները՝ ԱՌՆ ազգային պլատֆորմի շրջանակներում:

#### Հողված 4. Համաձայնագրի շրջանակներն ու տևողությունը

1. Սույն համաձայնագիրը ներառում է այն գործողությունները, որոնք սահմանված են «Ծրագրի նկարագրով» ու իրականացվում են Նախարարության ՃԿԿ-ում:

ա/ նպատակ

- ճգնաժամային կառավարման գծով առկա կարիքների ու առաջնահերթությունների վերլուծություն,

- ՃԿԿ հայեցակարգի հիման վրա օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի ու համակարգերի համապատասխանեցում,

- կազմակերպչական կառուցվածքի բարելավմանն ուղղված խորհրդատվություն, այդ թվում՝ ՃԿԿ-ի կառույցների սահմանումները, ղեկավար անձնակազմի իրավասություններն ու պարտականությունները, որոնք պետք է բխեն վերանայված հայեցակարգից,

- կադրային ապահովման սահմանում, որոնք կպահանջվեն ՃԿԿ-ի մշակված կառուցվածքով՝ ղեկավար անձնակազմի մասով,

- կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված խորհրդատվություն, որի նպատակն է համակարգման բարելավման ու գործառնական արդյունավետության բարձրացման ապահովումը,

- աղետների կառավարման ազգային պլանի կատարելագործմանն ուղղված մեթոդաբանական աջակցություն:

բ/ նպատակ

- կադրային ռեսուրսների սահմանում՝ ՃԿԿ-ի գործառնական կառուցվածքների համար անհրաժեշտ աշխատակազմի թվաքանակի ճշգրտմամբ,

- կարողությունների զարգացման համար տեղացի ու օտարերկրյա փորձագետների միջոցով կարիքների գնահատում,

- ՃԿԿ աշխատանքային խմբի աջակցությամբ մեկամյա աշխատանքային պլանի մշակում, այդ թվում՝ կարողությունների զարգացման նպատակով տեղական ու օտարերկրյա փորձագետների ներգրավմամբ,

- ոլորտային փորձագիտությամբ արտաքին մասնագետների ներգրավում ու նրանց գործունեության համակարգում,

- տեխնիկական միջոցների գծով կարիքների գնահատում,

- գործառնական ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված խորհրդատվություն, որոնք հատկապես վերաբերում են ՃԿԿ-ի ստորաբաժանումների իրավասություններին ու պարտականություններին,

- <<Արտակարգ իրավիճակների կառավարման պլանի>> վերաբերյալ մեթոդաբանական խորհրդատվություն,

- ազգային տվյալների բազայի կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված խորհրդատվություն:

գ/ նպատակ

- ԱՌՆ այլ շահագրգիռ կողմերի (Ազգային պլատֆորմ, շահագրգիռ նախարարություններ և այլն) հետ տեղեկատվության ու փորձի փոխանակման գործող համակարգի ու մեխանիզմների (ընդհանուր հանդիպումներ, համատեղ միջոցառումներ և այլն) գնահատում,

- ԱՌՆ այլ շահագրգիռ կողմերի (Ազգային պլատֆորմ, նախարարություններ և այլն) հետ համակարգման մեխանիզմների բարելավմանն ուղղված առաջարկություններ,

- ԱՌՆ հիմնական գործընկերների շրջանում ՃԿԿ-ի իրավասությունների ու գործառույթների մասին իրազեկության աստիճանի բարձրացման մեխանիզմների ամրապնդման ու կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

## **Հոդված 5. Իրավասությունները և կառավարման իրավազորությունը**

Նախարարությունը՝

ա/ հաստատում է նախարարության անձնակազմի ցանկը, որն իրավասու է Ծրագրի իրականացման նպատակով համագործակցել համապատասխան հաստատությունների հետ,

բ/ աջակցում է օտարերկրյա ու տեղացի փորձագետներին, ինչպես նաև տրամադրում է անհրաժեշտ իրավասությունները, փաստաթղթերը և տեղեկատվությունը:

## **Հոդված 6. ՇՀՁԳ-ի պարտավորությունները**

ա/ ՇՀՁԳ-ն ապահովում է Շվեյցարիայի Համադաշնության մասնակցությունը դրամաշնորհի ձևով, որն օգտագործվում է միջազգային խորհրդատուների ծախսերը հոգալու ու սույն Համաձայնագրի չորրորդ հոդվածով նախատեսված գործողություններն իրականացնելու նպատակով,

բ/ վարձում է միջազգային փորձագետներ և ապահովում նրանց վարձատրությունը այն աշխատանքների մասով, որոնք կհամաձայնեցվեն կողմերի միջև,

գ/ տեղեկացնում է Նախարարությանը ոլորտային փորձագետների առաքելությունների ու դրանց գործունեության արդյունքների վերաբերյալ:

## **Հոդված 7. Նախարարության պարտավորությունները**

Նախարարությունը՝

ա/ ձևավորում է 4-5 անդամից բաղկացած Աշխատանքային խումբ, նշանակում է Աշխատանքային խմբի ղեկավարին որպես Ծրագրի համար պատասխանատու,

բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարում է Աշխատանքային խմբի անդամների աշխատավարձերը, ինչպես նաև սահմանված բոլոր նպաստներն ու ծախսերը՝ Ծրագրի գործողության ամբողջ ընթացքում ու վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար,

գ/ համապատասխան աշխատակիցներին ուղարկում է վերապատրաստման դասընթացների՝ ելնելով նպատակահարմարությունից ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարում է դասընթացների մասնակցության գործուղման ծախսերը,

դ/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարում է տեղացի ոլորտային փորձագետների ծախսերը Հայաստանում՝ ղեկավարվելով խորհրդատուի ու Աշխատանքային խմբի կողմից ձևակերպված կարիքների գնահատումով ու մշակված տեխնիկական առաջադրանքով,

ե/ մատուցում է անհրաժեշտ վարչական ծառայություններ, ինչպես, օրինակ՝ Նախարարության շենքում գրասենյակային տարածք, ինտերնետային կապ ու թարգմանիչ՝ ըստ խորհրդատուի կարիքների:

## **Հոդված 8. Ծրագրի կառավարումը**

1. Ծրագիրը Նախարարության ու ՇՀԶԳ-ի համատեղ նախաձեռնություն է և կառավարվում է նրանց կողմից:

### **2. ՇՀԶԳ-ի կողմից.**

-ՇՀԶԳ-ն պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման համար:

-Որոշակի տեխնիկական կարիքներ բավարարելու և վերապատրաստման իրականացման նպատակով ՇՀԶԳ-ն կարող է ներգրավել միջազգային փորձագետներ,

### 3. Նախարարության կողմից.

- պատասխանատու է Ծրագրի բաղադրիչների՝ ըստ Ծրագրի նկարագրի իրականացման համար,

- ձեռնարկում է անհրաժեշտ միջոցները աջակցելու համար Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմանը,

- մասնակցում է Ծրագրի ղեկավար հանձնախմբի աշխատանքներին,

- ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ, որոնք կհամարվեն անհրաժեշտ ու օգտակար Ծրագրի նպատակներն իրականացնելու համար: Տեղեկատվությունը կօգտագործվի բացառապես Ծրագրի իրականացման նպատակների համար: Որևէ այլ նպատակով տեղեկատվության օգտագործումը կատարվում է բացառապես նախարարության թույլատրությամբ:

### 4. Համագործակցություն Ծրագրի շրջանակներում.

- Խորհրդատուն և Աշխատանքային խումբը գործում են սերտ համագործակցության պայմաններում: Նրանք համատեղ վերլուծում են ընթացիկ վիճակը, կարիքները, մշակում լուծումներ: Խորհրդատուն ուղղորդում է Աշխատանքային խմբի գործողությունները՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն:

- Աշխատանքային խմբի ղեկավարը պարբերաբար տեղեկացնում է խորհրդատուին ծրագրային գործողությունների ու միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

- Խորհրդատուն՝ Աշխատանքային խմբի հետ համատեղ ձևակերպում է փորձագետների գծով կարիքները, մշակում տեխնիկական առաջադրանքներ ու համատեղ համակարգում նրանց աշխատանքները: Տեղացի փորձագետների ընտրությունը կատարվում է համատեղ խորհրդատուի և Աշխատանքային խմբի կողմից: Միջազգային փորձագետների ընտրությունը կատարվում է համատեղ խորհրդատուի և ՇՀԶԳ-ի կողմից:

## **Հոդված 9. Վերահսկողությունը և համակարգումը**

1. Ծրագրի ընդհանուր վերահսկողությունն ու համակարգումն իրականացնելու, ինչպես նաև քաղաքականության հարցերին լուծումներ տալու նպատակով ստեղծվում է Ղեկավար հանձնախումբ (ՂՀ), որի նիստերը անցկացվում են եռամսյակը մեկ անգամ: ՂՀ-ն համարվում է իրավագոր, եթե նիստին մասնակցում են սույն Համաձայնագրի երկու կողմերի ներկայացուցիչները, իսկ ՂՀ-ի որոշումները ընդունվում են փոխհամաձայնությամբ:

2. Ղեկավար հանձնախումբը կազմված է հետևյալ անդամներից, որոնք ունեն վճռական ձայնի իրավունք.

ա/ արտակարգ իրավիճակների նախարար, կամ նրա կողմից լիազորված անձ՝ համանախագահ,

բ/ ՇՀԶԳ, Հարավային Կովկասում հումանիտար օգնության մարդասիրական ստորաբաժանման ղեկավար կամ նրա կողմից լիազորված անձ՝ Հանձնախմբի համանախագահ,

գ/ ՇՀԶԳ-ի ներկայացուցիչ՝ հանձնախմբի քարտուղար,

դ/ Նախարարության ներկայացուցիչ՝ հանձնախմբի նախագահի տեղակալ,

ե/ ԱԲՆ խորհրդատու,

զ/ Աշխատանքային խմբի ղեկավար:

Հանձնախմբում դիտորդի կարգավիճակ ունեն հետևյալ ներկայացուցիչները.

ա/ Նախարարության մեկ ներկայացուցիչ,

բ/ <<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի մեկ ներկայացուցիչ,

գ/ ՇՀԶԳ-ի մեկ ներկայացուցիչ,

դ/ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված աշխատանքային խմբի բոլոր անդամները:

3. Ղեկավար հանձնախումբը իրականացնում է հետևյալ առաջադրանքները.

ա/ աջակցում է Ծրագրի իրականացմանը և ուղղություն տալիս իրականացման հետ կապված կարևորագույն խնդիրների լուծմանը,

բ/ լուծումներ է տալիս տարածայնություններին, որոնք կարող են առաջանալ Ծրագրի իրականացման ընթացքում,

գ/ հաստատում է Ծրագրի գործողությունների պլանը, որը ներկայացնում է խորհրդատուն,

դ/ քննարկում և տեղեկատվություն է փոխանակում Ծրագրի վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների կամ հիմնախնդիրների վերաբերյալ,

ե/ հետևում է Ծրագրի ընթացքին ու համաձայնություն տալիս անհրաժեշտ փոփոխությունների իրականացմանը,

զ/ առաջարկում է թեկնածուներ վերապատրաստման դասընթացներին ու ուսուցողական այցելություններին մասնակցելու համար:

4. Ղեկավար հանձնախմբի արտահերթ ժողովներ կարող են հրավիրվել Ղեկավար հանձնախմբի անդամներից մեկի պահանջով: Ժողովները հրավիրվում են Ղեկավար հանձնախմբի նախագահի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում Ղեկավար հանձնախմբի նախագահի տեղակալի կողմից:



## **Հոդված 10. Հաշվետվությունները և տեղեկատվությունը**

1. Ծրագրի ավարտվելուց երեք ամիս առաջ խորհրդատուն մշակում է ընթացիկ հաշվետվության նախագիծը, որի մեջ նկարագրում է նվաճումները և բաց մնացած հարցերը՝ վկայակոչելով արդյունքները և տրամաբանական հենքի ցուցանիշները: Հաշվետվության հիման վրա ընդունվում է որոշում Ծրագրի երկրորդ փուլի վերաբերյալ: Հաշվետվության վերջնական տարբերակը մշակվում է Ծրագրի ավարտին և ծառայում է որպես եզրափակիչ հաշվետվություն:

2. Համաձայնագրի երկու կողմերը միմյանց ժամանակին տեղեկացնում են ծագող այն բոլոր իրավիճակների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա:

## **Հոդված 11. Մոնիթորինգը և գնահատումը**

Հարավային Կովկասում Շվեյցարիայի Համադաշնության համագործակցության գրասենյակը և Նախարարությունը վերահսկում են Ծրագրի իրականացման ընթացքը: Ծրագրի սույն փուլի համար չի նախատեսվում որևէ արտաքին գնահատման առաքելություն:

## **Հոդված 12. Ապրանքների և ծառայությունների մատակարարումը**

1. Շվեյցարիայի հատկացումների հաշվին իրականացվող ապրանքների և ծառայությունների ձեռքբերումները պետք է իրականացվեն ՇՀՀԳ-ի կանոնների համապատասխան:

2. Ծրագրի գործողության ընթացքում Ծրագրի իրականացման նպատակների համար ՇՀՀԳ-ի միջոցներով ձեռքբերված ապրանքները մնում են Ծրագրի անսահմանափակ օգտագործման տիրույթում և չեն կարող ուղղվել այլ նպատակների՝ առանց ՇՀՀԳ-ի նախապես գրավոր համաձայնության:

3. Եթե որևէ պատճառով Ծրագիրը կասեցվում է, ապա Շվեյցարիայի ֆինանսական միջոցներով ձեռք բերված ապրանքների ճակատագիրը որոշվում է կողմերի գրավոր համաձայնությամբ: Նման դեպքում ՇՀՀԳ-ն չի ստանձնում որևէ պարտավորություն, որը կարող է առաջանալ նշյալ ապրանքների գծով:

4. Ծրագրի ավարտին երկու կողմերը գրավոր համաձայնության են գալիս այն գույքի ու ապրանքների վերաբերյալ, որոնք մատակարարվել են Ծրագրի իրականացման ընթացքում:

### **Հողված 13. Համաձայնագրի գործողության դադարեցումը**

1. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

2. Եթե որևէ կողմ կհամարի, որ սույն Համաձայնագրի նպատակներն այլևս իրականալի չեն կամ մյուս կողմը չի կատարում սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, ապա մյուս կողմը իրավունք ունի կասեցնել կամ դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին: Չնայած վերը շարադրվածի՝ յուրաքանչյուր կողմ կարող է անմիջապես դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ Համաձայնագրի էական խախտման դեպքում: <<էական խախտում>> նշանակում է սույն Համաձայնագրի կարևորագույն պայմաններից մեկի լուրջ խախտումը:

3. Եթե <<ֆորս մաժորով>> (բնական աղետ և այլն) պայմանավորված իրադարձությունները անհնարին են դարձնում սույն Համաձայնագրի կատարումը, ապա յուրաքանչյուր կողմ կարող է անմիջապես դադարեցնել Համաձայնագրի գործողությունը այն պահից, որից դրա իրականացումը կհամարվի անհնարին:

4. Սույն Համաձայնագրի վաղաժամկետ կասեցման կամ Ծրագրի իրականացման ավարտին չօգտագործված գումարները տնօրինում են Համաձայնագրի կողմերը՝ բանակցությունների միջոցով:

### **Հողված 14. Փոփոխությունները և վեճերի լուծումը**

Սույն Համաձայնագրում որևէ փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր և երկու կողմերի համաձայնությամբ:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանությունների կամ կիրառման գծով ծագած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով:

### **Հողված 15. Ընդհանուր դրույթներ**

Սույն Համաձայնագրի շրջանակներում կողմերը ոչ ուղղակի, ոչ անուղղակիորեն չեն ակնկալում օգուտներ: Ցանկացած կոռուպցիոն կամ ապօրինի վարքագիծ նշանակում է սույն Համաձայնագրի խախտում ու հիմնավորում դրա դադարեցումը, ինչպես նաև հիմք հանդիսանում լրացուցիչ ճշգրիտ միջոցառումների իրականացման համար՝ կողմերի օրենքների համաձայն:

Ելնելով Ծրագրի կատարողականից և հետագա կարիքների համատեղ գնահատման արդյունքներից՝ երկու կողմերը որոշում են ընդունում Ծրագրի սահմանված տևողությունից դուրս համագործակցության ու դրա ձևերի վերաբերյալ:


## Հոդված 16. Համաձայնագրի տևողությունը և արդյունավետությունը

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է ստորագրման պահից: Համաձայնագիրը իրավական ուժ է ստանում Կողմերի ստորագրությամբ ու դադարեցվում են երբ կողմերը կկատարեն Համաձայնագրով սահմանված իրենց պարտավորությունները:

Սույն Համաձայնագիրը կազմված է չորս բնօրինակից անգլերեն և հայերեն լեզուներով: Անհրաժեշտ մեկնաբանությունների դեպքում գերակա է համարվում անգլերեն տարբերակը:


Կողմերը սույնով հաստատում ու ստորագրում են սույն Համաձայնագիրը, որը կնքվել է Երևանում, 2012 թ. մարտի 14- ին:

**ՀՀ արտակարգ իրավիճակների  
նախարար**



**Արմեն Երիցյան**

**Հարավային Կովկասում  
շվեյցարական  
համագործակցության  
գրասենյակի տնօրեն**



**Ռուդոլֆ Շոխ**